Արձանագրության 3
Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/114» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 25.06.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Աբրահամյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Քալանդարյան, Գ. Սաֆարյան
Գ. Խարբության , Ա. Մնացականյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ռ. Աբրահամյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցների կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իրենց կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ռ. Աբրահամյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Այ-Թի Թրեյդինգ ՍՊԸ	Բավարար
ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/114 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ռ. Աբրահամյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել

-1-ին և 2-րդ չափաբաժնների մասով «Այ-Թի Թրեյդինգ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված մասնակից:

-3-րդ չափաբաժնի մասով «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված մասնակից և վերջիններիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ռ. Աբրահամյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ռ. Աբրահամյան

_____ Մ. Քալանդարյան

Անդամներ՝ _____ Գ. Սաֆարյան

_____ Գ. Խարբության

_____ Ա. Մնացականյան

Քարտուղար՝ _____ Ի. Եղիազարյան